2. Դիմորոշ իմաստով, ինչպէս աշխարհաբարում, եռ զու, մենք, զուք բառերի նշանակութեամբ. օրինակ՝ Մի հեղգացուք մեղաւորս դառնալ առ Աստուած: Օգնեա ինձ միայնումու որ ոչ ունիմ օգնական, և առց փառս քեզ ճշմարտիգ: — Այլ և կոչականների հետ՝ Լուարներն ինձ, զօքդ տմենեքեան: Սիրեցեալիք իմ:

3. Ստացական իմաստով ինչպէս աշխարհաբարում՝ իմ, զու, իւր, մենք, մենք, իւրնանց, նորա: Նոցա բառերի իմաստով, սրոնց հետ և սովորաբար գործ են ածւում: Օրինակ՝ Եթէ ակն

Քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի։
Յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիւ-
ցին կենդանին ես և շունչդ ի քեզ է։ Ի քում
ականդ գերան կայ։ Զմեր վատթարութիւնս յժ
տարայց։ Մերոյ աղջիս Աշխարհս Հոյցոց Զձեր
մոլորութիւնդ սրտի մտօք գարձուցանիցէք ի
ճշմարտութիւն երկելի մերոց գիւցաղնական
օրինայց։ Հաւասար իմոց սիրելի նախարարացու

143. Գոյականաբար գործածուած ածական
անունները և սեռականները, որոնց անունը
զեղչուում է, ստանում են, ինչպէս աշխարհա-
բարում, սովորաբար Ն, Երբեմն Ս, դ յօգը և
անուան նախդիրը, այսպիսի ածական անուն-
ները դրում են իրենց գոյական անուան հօլովով,
իսկ սեռականները միայն ուղղական և հոյցական
հոլովով են գործածում։ Երբեմն միայն յոդ-
նակի թռափ։ Օրինակ՝ Եթէ ընդ փայտ գալար
զայս առնեն, ընդ չորն (=ընդ փայտ չոր) զի՞նչ
լինիցի Երթայր տուք զիայսերն կայսեր, և զիօս-
տուծոյն։ Աստօնոյն Հոյցոյ զաշխարհիս (=աշ-
խարհիս բաները) կամ զՑեառն Զբոյսն ի քո-
յոց քեզ մատուցանեմը։ Զնոցայն լաւ վարկու-
ցեալ քան զիւրն փրկութիւն։

Առանձնապէս գիտելու է, որ գերանուն-

ների սեռականները (օրոնցից իմ, քու, մեր, ձեր,
խը ստացական ածական են. § 64. 6. 7) լի-
նում են՝

իմ, իմն, իմս, իմյը, յիմսո=իմյա-
կան, իմյին, իմյին=իմը, իմս, իմինը։

Քո, քոյն, քոյդ, քոյքն, զքոյսն=քոյական,
քոյին=քոնը, քոնդ, քոնդ։

Իւր, իւրն, իւրքն, յիւրօն իւրական, իւ-
րային (իւրայոցն, յիւրայոց, իւրայովը)=իւր,
իւենը, իւրականը։

Մեր, մերս մերային (մերայոց), մերս-
յին, մերյն մերը, մերոնք,

Ճեր, ճերդ ճերային (ճերայոց), ճերոյին
ճերը, ճերոնք։

Իւրեանց, իւրեանցն, զիւրեանցն, իւրեանցըն,
միւրեանցն իւրեանցային=իւրեանցը։

Սորայս, գորայդ, նորայն, սոցայն, գոցայն,
նոցայն (հոլովումը ան § 64. 7) սրանը, զը-
րանը, նրանը և նի։

Դամ. Ա և Ո վերջացած բառերի վրայ՝ Երբ յօդ է
զրւում, յօդից առաջ մտնում է Լ քոյդ, նորայն և զի-
ցի ձեր բան՝ այս այս և ոչն ոչ։

144. Որ, որ ինչ, որ ոք, որպէս, որպիսի,
որշափ, յորժած, յորմէ նետէ, ուր, մինչ, զի (նա-
խագաո) բառերով սկսուած երկրորդական յա-

բարեւտկան խօսքերի մէջ որ և է բասի ըրացի
նախդիլներից, կատական բառերից, շաղկապ-
ներից ու միջարկութիւններից, ինչպէս և սմէ,
ոք, իմն, երբեմն անորոշներից), գլխաւորապէս
բայի վրայ դրւում է ս, ղ, ն յօդերից մէկը:
Ս յօդը նշանակում է այս գէպքում՝ եօ, մէկը,
սա, սաքա, այս, այսօքիկ, ասոտ, այսր, այժմ;
այսօր,—դ յօդը նշանակում է՝ զու, դուք, դա,
դոքա, այդ, այդօքիկ, այդր, յօդը՝ ժամու.
Ն յօդը՝ նա, նորա, այն, այնօքիկ, անդ, անդր.
յայնժամն Երբեմն էլ ստանում են աւասիկ, ա-
ւագիկ, աւանիկ ցուցականների իմաստը:

Յօդերն այսպէս գործ են տծւում աւելի
այն ժամանակ, երբ յարաբերեալը յարաբերա-
կանից յետոյ է դամիս (<§ 130. 2), կամ երբ
յարաբերեալն անձնական ցերանուն
է և զեղչուած է: Բայց Երբեմն յարաբերեալի
չփեղուած ժամանակն ևս աւելագրութեամբ բա-
նում են ոյս յօդերը՝ խօսքին ոյժ տալու հա-
մար: Աշխարհաբարում՝ այս գէպքում սովորա-
բար կինուում է յարաբերեալը Օրինակ՝ եօ որ
կօշեցայս անմահ, անաւասիկ ի մառանել եր-
թում (<—ես, ես որ անմահ կոչուեցայ ...), ես
եմ որ խօսիմս ընդ քեզ: Զի ասէքը՝ բարիոք
ասէք (<—Այդ որ ասում էք, լաւ էք ասում):

Ոչ զիտեմ զինչ խօսիսդ: Գիտէք զինչ արարիդ-
ձեզ: Արարին օրպէս ուաննե: Ապախտ արարեր
զվասաւական զոր ինձն վաստակեցեր, եւ որ բա-
պառնասդ ինձ մահու, ահա խառնես զիս ի
զունդն Քրիստոսին: Այլ զոր գուգ կօշես մեծ
Անահիա տիկին ... Որ ասացերդ թէ ... Զոր ա-
սացերն թէ ... Եւ մինչդեռ կային կախեալ այս
պէս, խօսեցաւ զայս ամենայն: Այդ են անհ-
րեսյիթ արարածը Աստուծոյն քոյ՝ զոր գուն աե-
սանեաւ Դու սստէն իսկ աշխատեաց ի մշակու-
թիւն տանջանացդ յորում կասդ: Երանի երկ-
րին, ընդ որ նայն անցանիցէ, և տեղւոյն, ուր
նայն վախճանեացի (անս § 7. ծան, 3, 3):

145. Հարցական խօսքերի մէջ ես երբեմն
բայի կամ ուրիշ բառի վրայ դրւում է ս, ղ, ն
յօդերից մէկը, որ և աշխարհաբար թարզ-
մանում է այս, այդ, այն ցուցականներով: օրի-
նակ՝ Զինչ խօսիսդ՝ Այդ ինչ ես խօսում Զիմրդ-
երկնչիոդ ի սատանայէ՝ Այդ ինչպէս վախե-
նում ես սատանայից:

146. Որոշող ն յօդի գործածութիւնն աշ-
խարհաբարում և գրաբարում մեծ մասմբ
նոյն է: Աւշաղրութիւնն պիտի գարձնել հետեւալ
արարիութիւնների վրայ,

1. Առվարաբար որոշող յօդ չեն առնում՝ ընդհանուր իմաստով, իբրև սեռի անուն, գործածածուած անունները, մանաւանդ երբ յօդնակի են, բայց երբ հայցական են, զ նախդիքն առնում են. Անյօդ են մնում նոյնպէս և բնութեան մէջ մի հատ առարկաների անունները՝ լուսին, արեգակն, երկիր, երկն, աշխարհ, հիւսիս, հարաւ երն, նոյնպէս և գժոխը, սատանայ, գիր (—Առուր Գիրը). ազգերի անունները, երբ յօդնակի են, յատուկ անունները, այլ և ծօվ, ցամաք. Տէր, Աստուած (քրիստոնէական իմաստով), յաճախ և արքայ բառը երն Օրինակ՝ Հաւատը (—հաւատըրը) առանց գործոց մեսեալ են. Գինի (—զինին) ուրախ առնէ զմարդ. և հայ հաստատէ զիմբուտ մարդոյ, Որ սիրէ զիմբուտ, սիրէ զիմաստութիւն. Զայնը զփորձ ոչ միայն քրիստոնեայք, այլ և հեթանոսք և մոզք գիտենա Հրեայք ի զուր ակնկալութիւն կապեալ են. Մի գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտին ապականեն և ուր գողք ական հաստանեն. Աչ կարէք Աստուծոյ ծառայել և մամանային Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք և յորժամ կամիք կարող էք առնել նոցա բարիստ

2. Եթէ յատուկ անունն իբրև խնդիր ունի

առաջից մի մականուն կամ հասարակ անուն (քայլայտիչ), այդ մականունն ու հասարակ անունն առնում են ն, կոչականում դ յօդը իսկ եթէ մականունը կամ հասարակ անունը յատուկ անունից լյետագաս են, երկուսն ես, խնդիրն և խնդրառուն, սովորաբար անյօդ են մնում. ինչպէս՝ Մեծն ներսէս, սէգն ծըրդատ, թագաւորն Ծրդատ, զետն Ծրդրիս, քազաքն Ծիզըսն, քաջդ Թէոփիլէ, —ներսէս Մեծ, Ծրդատ թագաւոր, երտսիս գետ նոյն ձևով արեգ ամիս, շաշան ծաղիկ, եղիկն ծառ. բայց ամիսն արեգ, ծաղիկն շաշան, ծառն եղիկն.

3. Եթէ անունն ունի որոշող սեռական խնդիր, սովորաբար միայն սեռականն է յօդ առնում. Երբեմն սակայն երկուսն են՝ սեռականն ու իւր մնունը՝ յօդ են առնում. Բայց երբ սեռականը յատուկ անուն է, յօդը սովորաբար դրւում է միայն խնդրառու անուան վրայի երբ սեռական խնդիրն է իմ քո, մեր, ձեր, իւր, իւրեանց, նորա, նոցա բառերից մէկը, կամ մի ազգի անուն, դրանց խնդրառու անունը կարող է ն յօդ առնել կամ բնաւ անյօդ մեալ (առ § 142. 3). Օրինակ՝ կինն դնելայ հասեալ առ սուրբն ներսէս՝ զոյժ արկանէր նմա զիւրոյ առնել տարապարտ կորուստն. Մի

գիտասցէ ձալս քաղ զինչ զործէ աչ քո, որպէս
զի եզիցի ողօրմութիւնն քո ի ծածուկ, և հայրն
քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ
յայտնապէս Զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է
ձեզ, և նախարարուն Հայոց անկոնէր թագաւոռ-
րութիւնն Այրուձին Հայոց, Թագաւորն Հռնաց,
Զինուորն Քրիստոսի և բառնալ ազգին Արշա-
կունեաց, Ազդն Ասանայ պարսկին և սուրբ
ուխտէն քրիստոնէից,

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

147. Գրաբարի կապերը գրում են իրենց
գոյականից տռաջ, ուստի կազում են նախդիր
կամ նախագրութիւն, նախդիրներն են՝ ի(յ),
ց, տո, ընդ, բատ, իրեն զ, քան զ, մինչ, բաց կամ
բայց, հանգերձ, վասն:

148. Նախդիրների կիրառութեան համար
ընդհանրապէս պէտք է իմանալ.

1. Կողմանի խնդիրներն իրենց խնդրա-
ռութիւնների հետ առնեում են իրրե մի միութիւն.
ուստի նախդիրը դրւում է նախագաս կողմանի
խնդիրներից ամենից առաջ. Կոյն իսկ եթէ կողմ-
նակի խնդիրը մի նախդրով է սկսում, նըսնից

առաջ ընկնաւմ է խնդրառուի նախդիրը. Օրի-
նակ՝ Այս արդարացուցանէ զանդիր հին ասա-
ցեալ զրցցու եւ զընկ լծով կացեալսու (=զկա-
ցեալս ընդ լծով) լծագիր և հարկապահանջն
կացոյց բազմաց,

2. Նախդիրը կարող է կրկնուել նախագաս
ու յետագաս կողմնակի խնդիրների և իրենց
խնդրառութի վրայ, մանաւանդ երբ կողմնակի
խնդիրը արե է բառով բաժանուած է իւր խնդրա-
ռուից. Օրինակ՝ Զամենեցանց զկարդեալ թո-
շակն նուտպեցուցանէին. Զգենու և զղարդո զա-
րի արանց և դրաջ երիշարաց, Յափշտակել ըղ-
քրիամանէից զինու և զոտացուածու. Այլ զիս-
տու ոյ զպատիւն և զպաշտոն ոչ ումեք վայել է
տալ. Զրոնաց աշխարհն և զշառունց քաջ գիւ-
տեմ. Յամենեսին ի ձեզ Բնդ ձեզ ընդ ամե-
նեսնեանն Զողջոյն բերեալ զմեծ թագաւորինն
Զի բաքանչուր աեզի չառհեր նոցա զբազմակառ
նին. Արել ի հարազատէն սպանանի յեղբօրէն:

3. Նախդիրները մեծ մասամբ ունին մի
քանի նշանակութիւն և գործ են ածւում մի
քանի հոլովների հետ՝ ձեսփոխելսով նրանց հո-
լովական իմաստը Երբեմն սակայն նախդիրները
միայն աւելի սրոշում են հօլովների իմաստը, որ
հոլովներն առանց նախդիրի էլ ունին:

9.

149. Զ նախդիրը բառին կպած է գրւում
թաղաձայնից առաջ՝ արտասանում է ըզ. Ճե-
ռագիրների մեջ գրւում է նաև զը, ինչպէս ար-
տասանում էին հին վարդապետները, - զմարդ
ըզմարդ, զըմարդ:

150. Զ հայցականի հետ իբրև սրոշազ յօդ,
երբ հայցականը սրոշեալ է կամ սեսի անուն է,
յաճախ և երբ լուսութեան հայցական է (տես
 §§ 50, 99, 1, 133—135, 146, 1).

151. Զ տրականի հետ խնդրում են մի
քանի բայեր՝ հարկանել, զարկանել, զարկացո-
նել, անկանել: Աշխարհաբար՝ տրական, գործիա-
կան, երգեմն և ուղղական հողմներով. ինչպէս՝
Հարկանեմ զքարի, զիմի, զգետնի (=քարի
զարկանել, քարովը տալ), Յետո յետո չոգան և
զարկան զգեանի (=զետին զարնուեցան, զետ-
նովը դիպան): Մատի զծափի հարկանեմ (=
ժափի ծափի տալ), Նկատել հետեւալ դար-
ձուածները՝ զահի, զերկիւդի, զամօթի, զգողման
հարկանիմ Զագահութեան, զախտի հարկանիմ
(ինչպէս աշխ. մեկի սիրուն զարնուել): Զգիմի
հարկանիմ ուժեք:

152. Զ բացառականի հետ, որ կոչւում է
պատմական հոլով, նշանակում է մասին, վրայ,
համար (=վասն, յաղագս, ի մասին), կամ
թարգմանում է լոկ բացառական հոլովով:
Խեդրում են:

1. Այն բայերը, որոնք ցոյց են տալիս՝ ա-
ռել, պատմել, մատածել, ինչպէս՝ խորհիմ, զըր-
պարսեմ, վկայեմ, ճառեմ, գրեմ, հարցանեմ,
հոգամ, փոյթ ունիմ, անփոյթ առնեմ, տրտըն-
չեմ, քրթմնեմ, խէթ ունիմ, — այլ և գոհանամ;
կարօտիմ: Օրինակ՝ Հարցանելով եհարց զմէնչ
(=մեղնից, մեր մասին): Ոչ է փոյթ քեզ զու-
մերէ: Խորհուրդ տրտին զնմանէ, Եզրայր քո-
ունի խէթ ինչ զքէն: Դու ուսաբ գիտես զայդ-
պիսի բանն խօսել զծեառնէ: Աստուած իմ,
գոհանամ՝ զըէն:

2. Ունիմ, կալնում, ձգեմ, առնում, բուռն
հարկանեմ, — կապեմ, կախեմ, կախեալ կամ
բայերը: Աշխ. բացառական հոլով, օրինակ՝ կա-
լաւ զձեռանէ նորա (=ձեռիցը բռնեց): Բուռն
եհար զնոցանէ: Գրեր և կնքէր զերդումն և կա-
պէր զաւետարանէն (=աւետարանից կապեց):

3. Առաքեմ, յղեմ, արձակեմ (=մարդ-
ուղարկել), զնամ, երթամ, գեսպան առնեմ
ելն, զումեք, զիմեք—մէկի նտեւից գնալ, ու-

զարկել (կանելու, բերելու համար), կտմ՝ դնալ,
ռւզարկել մի բանի (քերելու համար), Օրինակ՝
Ասպետաց հապուհ ի Հայու արս զնողոյ եւ զջոյ
(—հողի ու ջրի) և ընդ սակաւ տւուրս եկին
բերին զայն ինչ զորմէ յշեացն (—ինչի որ ու-
ղարկել էր):

153. Զ զործիականի նետ, որ կոչում է
պարտաւետն հողով, նշանակում է.

1. Տեղի իմաստով շուրջը, չորս կողմքը, չորս
բոլորը, կամ՝ կողմը, վրայ, մօտերը: Օրինակ՝
Մի ոմն ի նոցանէ ար զնովան կային: Խանեցան
զնովաւ ժողովուրդք բազումք: Ամենայն ժողո-
վուրդն զծովեգերին զցամաքն ունեին: Եղեն
գիտաւնք նոցա իբրի ազր զնանապարհուաւ: Եւ
մտեալ թագաւորն հայել զբազմակունաքնու—Եր-
բեմն աւելանում է շուրջ մտկբայլը, ինչպէս՝ ժո-
ղովուրդն շուրջ զնովաւ նոտերք Հայեցաւ շուրջ
զիրի յաշակերտան:

2. Ժամանակի իմաստով մօտերը (շուրջ),
ժամանակները: Օրինակ՝ Զինն ժամու գոչեաց
Յիսուս (—ժամը իննի մօտերը, —շուրջ ինը ժա-
մին): Եւ ելեալ զերորդ ժամու ետես այս,
զի կային դատարկը ի հրապարակու Զմէջ գիշե-
րաւ: Զայնու ժամանակաւ:

3. Հետեւեալ բայերն առնում են զով զոր-
ծիական խնդիրներ, որ աշխարհաբար թարդ-
մանում են կամ զործիական, երբեմն և ու-
րիշ հոգավով, կամ վրայ, վրայով բառերով,—
Եմ ինիմ, գոտի տանեմ զիւիք—մի բանով ին-
նել (անել), մի բանի հետ լինել, զբազուած լի-
նել. ինչպէս՝ Մինչ նորս զազմկան էին կոմ
զայնու լինէին, գային Զբանիք տանել զաք
(—մէկին խօսքի բանել, խօսքով անել): Ամե-
նայն պակասութիւնք զինեւ (—իմ մայոյ, իմ
վլիս): Զբազիմ զիւիք: Զմիւեամքը (—իրար
վրայ) երանել, զիզանել, արկանել Այր զայտամը
երանեին սիրել աշխարհու: Զամամը ձիծաղել,
կատակել, արհամարհել, այօպանել: Զմաւու առ-
ծել (—միտը բերել, մորով անցնել, մուածել):
Ածել զիւրի (—յանկուցանել, իրեն քաշել),
Ածել զձեւումը, զձեսոք, զրսամը (—ըմբանել,
անել): Ածել զնափիմը (—աւելացնել, վեց բե-
րել): Ածել զբազով (—բացով անցկացնել, վրան
զնել): Ածին զնորօք ձօրձու (—վանեերը ձօրձ
քաշեցին): Անել, առնուլ զզէն իւր զինքեամը
(—վրան ունենալ, առնել): Արկանել ինչ զիւրեաւ,
զդիւով (—վրան զցել): Զումենայն վաստուն
պատճառան արկանէր զկառելով իւր եւ զաջ թին
ըեկեալ զձանց կաշմարին արկեալ: Անկանել

գպարանոցաւ. (—զգովին ընկնել): Երթալ, վազել,
անցանել զիւիք, զգեստվ, զցամաքաւն (—մի
բանի վրայով), Երթալ զսրով (—որի վրայ ընկ-
նել): Յանել ինչ զերեսօք: Հեղուլ արտասուս
զերեսօք (—երեսովը, երեսի վրայով): Անցանել,
զանցանել, զանց առնել, ելանել՝ զպատուիրա-
նաւ, զուխտիւ, զիրատավ, զնսվաւ. (—զանց ա-
նել, անտես անել, չփատարել չպահել): Անցա-
նել, անցուցանել, զանցանել զոմամբ, զիւիք
(—գերազանցել, ասաւելուլ): Էկեղեցի շննեցին,
որ անցուցանէր պայծառութեամբ զդագաւու-
րաբնակ արքունեօքն (—երազանցում եր): Ան-
ցանել, զանցանել զոմամբ (—առաջ անցնել,
առաջ ընկնել մէկից):

ի, 8.

154. Ի նախդիրը ձայնաւորով սկսուող
բառերի վրայ գառնում է յ, երբեմն ի յ, որ
բառին կզած է գրւում:

155. Ի նայցականի նետ, որ կոշւում է
նախդիր բրական, գործ է ածւում:

1. Երբ ինդիրը ցցց է տալիս այն տեղը,
երբեմն և իրը կամ անձը, գէպի որը ուզգուում է

գործողութիւնը իրրե պատասխան յի հարցի
(§ 103. 1). Աշխարհաբար թարգմանուում է ուզ-
դական, տրական հոլովներով և դէպի, մէջ,
վրայ, մծտ բառերով. Օրինակ՝ Եւ թագաւորն
Հայոց դառնայր ի կազմանան Հայոց, յԱյրաբա-
գաւու, ի Վաղաշչապատ քաղաք, Ոչ արկանեն
գինի նոր ի ամիկս հինու Երթայք ի վաճառուա-
կանո և գնիենչիք. Առաքեցից ի նոսաւ մարդա-
րէս և տոաքիեալու Դիսողանս սափաւ արձակէր
յամենայն ազգս հեռաւուրաց Յիւրան եկին և իւրբն
զնս ոչ ընկալան: Ընդունել ինչ ի զանձ ար-
քունի: Երբե եկն ի նոր (ի թզինին): Զըսլոր
բարկութիւնն եհեկ յայցն երանելիս Որ յարե-
ւելս առ մեզ գոյցէ՝ թողցեն, իսկ յարելից
յարեմուտս անսանց լիցի ճանապարհ: Ամբարձ
զաշս իւրը յաշակերտաւ Ընդէր ոչ եսուր զար-
ձամին իմ ի սեղանաւորս Դուք Երթայք ի տօ-
նընի, ես ոչ Երթամք յայցն:

2. Երբ խնդիրը, սովորաբար բայտական տ-
նուն կամ անորոշ գերբայր, ցցց է տալիս նպաս-
տակը, որին համեմելու համար կատարուում է
գործ ազութիւնը: Աշխարհաբար թարգմանուում է
տրական, երբեմն և ուզգական հոլովներով և
համար (—վասն) բառով, բայցական անունը ոռո-
վորաբար անորոշ գերբայր է զաւնում: Երբեմն

պահում է գործադի և նախադիքը՝ Օրինակ՝ երթալ յօրս, հասանել յօգնութիւն, զումարել ի մարտ պատերազմից Խարչուրդ կաշել և գործ առաքել Արքեպոսում գասու հասցե յաջակերտութիւն։ Յափանէնէս քարոզէր զմկառութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց Յոռաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նշան պատանաց։ Այն հիւանդաւթիւն չէ ի մաս։ Զիմրգ կարէ սու տալ մեզ զմարմին իւր յաւել Սակոյ ի զրաւմն և ի կանգնումն բազմաց։ Մարիմօք եկեալ էին ի վաստակ արքունի, Աշխայ հագիր տանել զամենայն երկիրն Հայոց ի թռազաթիւն հարկաց և ի թեթեւութիւն ոյրուճիցն նուանցեաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն։ Դաք պարարէք զմարմինս ձեր նման կերպակւր։

Սոյն իմաստով գործ են ածւում և առ, առ ի, առ յ, առ ի յ արքնակ՝ Պատրիատք և մը առ ամենայն մեքենայս, ... ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել։ Վասետք և ջեռեալք առ այսել զայտս առըր եկեղեցւոյ։ Աշտկերաք հեղքը առ ի յաւառմն և 'Փոյթ առ ի վարդապետել։ Առաքեցին գաւանանս ... զի ըմբանեաց են զնա բանիք առ ի մատնել զնա պետութեան և իշխանութեան գաւառորին։

3. Երբ բայր ցոյց է տալիս մի բանից մի ուրիշ բանի, մի զինակից մի ուրիշի, մի պաշտօնից մի ուրիշի են. վախուել, դառնալ, Աշխարհաբար թարգմանում է ուղղական կամ տրական հոլովներով։ Օրինակ՝ Եղիցին գյուղաբնիքն ի գիւղինս և առապարքն ի հարթ ճանապարհու չող էիր և ի հոգ գարձցիս Զուկեսցին զաւուերս իւրեանց ի խոփս և զոտինս իրեանց ի մանգազու։ Առ առնելոյ զնա յողջակէդ։

4. Կործիական հոլովի իմաստով, որի աեզ և գրւում է յաճախս Աշխա, գործիական հոլով։ Օրինակ՝ ի ճանապարհ հեթանոսոց մի երթայրք Գոշեաց Յիսուս ի ձայն մեծ, Մկրտչեցէք զնստ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ Աղաղակել ի մի քերան։ Կոտորել ի սուր սուռելիք վառել ի զէն և ի զարգ Եհար զնստա ի հարուած անհնաբնու ննջել ի քուն թանձրութեան Յայլ և այլ լեզուս խօսել ։ Ենին զպարփակն կանգունս հինգհարիւր յերկայնութիւն։

156. Մեր քերականները ի նախորդ հայցական հոլով զնում են իրեն առանձին հոլով՝ նախորդի Տակին, որովհետ շատ բայիր և ածականներ այդ ձեռվ են առնում իրենց առարկայական խնդիրը, որ աշխարհաբարում սովորաբար (երրիմն և զրամարտում) արա-

իսկ հոլովագի է զբւում, ինչպէս ևն բացի վերհում յիշաւածներց համեմ ածել, հասանակել, հասուցանել (ի վասպաս, ի պատիւ), ձգել, արկանել (զգեսն յինչ—ձեռքը մնինել մի բանի), մերձնեալ, յրք, յինչ (=կողէնել, զիարչել մէ կին, մի բանի), ձայն առնել (=ձայնել մէ կին), արկանել (յինքն), դալ (ի միտու—ուչքի դալ), յաւեկուլ, փչել, ածել (ապասկ ի ճնուա ուրուք), դարձուցանել ինչ յրք, հասանել յրք, յարել, հաւասար, հայել, յեզուլ, յուսուլ, մեռն միմել, խնայել, դիմուլ, մատնել, տալ, մասուցանել, լիսասավանել, պահել (յարն—... օրուան պահել): Եսախանձաւոր իննել, պարաւաւոր մինել, վեսասկար մինել, մէտ և յօժար, պիտանի, պիտանացու, վասահ, ապաստահ մինել (յրք, յինչ—մէկին, մի բանի) են:

157. Ի հայցականի եւ եզակի տրականի հետ, որ կազմում է ներքոյական հոգով Այս իմաստով յոգնակիում ի նախողիրը դրւում է միշտ հայցականի վրայ, իսկ եզակիում տրականի վրայու թայց եթէ եզակի տրականն այ, ոյ վերջաւորութիւնն ունի, վերցւում են ում, ոչ վերջաւորութիւնները, եթէ կան (§§ 65, 68, 5), կամ եթէ ի հորովման ձև ունին (§ 94, 2), այս ձեն է վերցւում (ինչպէս, գիշեր, գիշերայ, —ի գիշերի, մարմին, մարմայ, —ի մարմինի), թէ չէ հայցական հոլովի վրայ է զբւում ի նախողիրը Յատուկ անունների, երբեմն և հասարակ ա-

նունների և գերանունների համար ևս վերցւում է եղանի հայցականը, այսպէս ևս բառն ունի միշտ յիս: Ներքոյական գուռում են.

1. Այն խնդիրները, որոնք եղելութեան միտեղում, մի բանի մէջ լինելն են ցայց տափու, իրեւ պատասխան ո՞ւր հարցի (§ 103, 2). Աշխարհաբար թմրգմանում է ներքոյական, տրական և ողգական հոլովմանը, կամ մէջ (միջին), վրայ, երեսին են, բառերով, Օրինակ՝ Քանզի էին իսկ ոյնպիսիրն բնակեալ ի կեանս իւրեանց իրեւ ի թանձրամած խաւարի, և ոզիքն տրգելեալը ի մարմինի իրեւ զիենդանի ի գերեզմանի, յորս ամենին շծագէ նշոյլ սուրբ լուսոյն Քրիստոսի Երենցան նոքա սուրբ ընդմէջ և վահան ի ձեռքին: Հարքն մեր ի Երենս յայսմիկ Երկիր պագին: Գրեր մատամբ յերկիրի Որ կայցէ ի տանիս: և կարսանին իւր ի տան, մի իջցէ ասնուլ: Բնկալար զբարիս քո ի կեանսն քում: Եւ ոչ Սպասման յամենայն ի վառուն իւրում (§ 52) զգեցաւ իրեւ զմի ի նոցանէ: Օրհնեալ ես գու ի կանոյու: Որ ի վարուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է: — Հեծեալ ի ձի, յէշ և յաւանակի իւրոյ: Հեծեալ եր ի ջորուզ իւրում Երիվար, յարում արքայ հեծանէր: Նոտել յամոռ իւրում: Դնել ի բանափ, ի դիպահոջ, ի գրի

ներքիում, ի նոր գերեզմանիւ Ակրմանիւ յոգա-
րակիւ Եայր Եփսուս յեզր ծավուն, ևս ի Հայր և
Հայր յիս է։ Այր մի էր յերսուսազէմ Փտուք ի
բարձուն Առու ծոյ և յերկիր խաղաղոթիւն և
ի մորգիկ հաճութիւն։

2. Ժամանակի պարտպայտական խնդիրները,
իրեւ նոր հարցի պատասխան Աշխարհաբար-
արական, ուզգական և ներքայական հոլովակրավ,
ոյլ և ժամանակ բառով։ Օրինակ՝ Ցամուեանն
չորրորդի հասին յաջսարհն Հայոց Հասին ի
Դուռն ի մեծի շարաթու Զատկին Յեօմներու-
ղում ժամու եթազ զնա ջերմն և հնդետառա-
ներորդի ամի տէրութեանն Տիրերեայ կայսեր,
ի գատաւորութեան Հրէտոստանի Պիղասոսի Պահ-
ացւայ ... ի քահանայապետութեան Անհոյի և
Կոյիիափայ եղե ... ի ծերութեան, ի մանկու-
թեան, ի խաղաղութեան, ի ժամու յամենայն
ժամու Պարտ է յամենայն ժամ յագօմս կալ:
ի նմին ժամու, ի նմին ժամանակի, յայնին ժա-
մանակին Յաւուշն ուժերորդի եկին, յաւուրս
Եապհայ, ի սկզբան, ի միաշարաթուն, ի միաշա-
րաթունին Պահեմ երիկցս ի շարաթու ի տար-
ով մի անդամն ի տարով և կիսում (տարի-
ու կէսում), յերեսուն ամի, ի վեց տարուր (—
երեսուն տարում, վեց օրում): ի գիշերի և ի

տուքնիւն, ի տուէ և ի գիշերի (-գիշեր ցե-
րեկ)։ Յայսամ գիշերի (=այս գիշեր), Յայն բան
եկին աշակերտքն (—այն խօսքի վրայ, ժա-
մանակի)։

3. Անորոշ գերբայը ժամանակի պարագայի
իմաստով։ Աշխարհաբար թարգմանւում է իս
վերջաւորութեամբ անկատար գերբայով (գնա-
լիս, խօսկիս)։ Ժամանակ, յետոյ բառերով (գը-
նալու ժամանակ, գնալուց յետոյ), կամ թէ
յաճախ երկրորդական խօսքով (երբ որ այս ինչ
բանը լինում է, լինում էր, եղաւ), իմ, քո, մեր,
ձեր, իւր ստացականները անորոշ գերբայի հետ
գրում են ում վերջաւորութեամբ տրական։
Օրինակ, ի բաննու ազգին Արշակունեաց տիրե-
ցին աշխարհին Հայոց ազգն Ասանայ պարուիին
և ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէտոստանի
յաւուրս Հերովդի արքայի, ահա մողք յարի եւ
լից եկին յերսուաղէմ Բազումը ի ձէնջ ի խոր-
շակէ յերթալն սատակիցին։ Ահա ել սերմանա-
հան սերմանել, և ի սերմաննելն իւրում՝ էր որ
անկատ առ ճանապարհաւ։ ի ծադել արեւու տու-
պացաւ ի գնակ քում։

158. Յ նախդիրը, որ միշտ անուան հետ կպած է զրւում, զրւում է հայցականի հետ և գործ է ածւում։

1. Միջնորդ բառի իմաստով, որի հետ երբ քեմ և բանում է, Օրինակ՝ Ըստէր, արքայ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուր Ցայդմ վասն ձերոյ ճշմօրիտ հաւատոցն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին։ Եկայք երթիցուք մինչեւ ցնեթղեհէմ։

2. Երբեւ խնդիր մի քանի բացերի և ածականների՝ փոխանակ արականի Օրինակ՝ Ասէ ցնա, ցիս, ցմեզ, ցոք, ցեզրայր իւր Ենքն ցինքն աօել Ասել ցմիտ իւր Ո՞ իցէ ի ձէնչ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար առյցէ նմաւ Եհարց ցնա, ցնոսա, ցաշակերտան ետ դնա ցիշակն իւր, ցաղջիկն Ցմեզ ապաստան։

Ա. Ռ.

159. Առ հայցականի հետ նշանակում է.

1. Դէպի, մօտ, երբ խնդիրը ցոյց է տառ միս այն անձը կամ իրը, գէպի որը ուզգուում է գործողութիւնը։ Աշխարհարար թարգմանուում է

նաև արտկան, ուկաւ անդամ և ուզգական հոլովով։ Օրինակ՝ Երթի ի տուն առ ընտանիք քու առ ին գառ Զոյն պատուէր հրամանի առ ամեննեսեան արկանէր։ Աղօթիք առ Առատուած կարգային, Գրել իբր առ առելիս և առ անպիտանաւ Ասաց աւակ մի առ նոսու Անկաւ առ ծունկս նորաւ Մատուցեալ քահանայն առ սեղաննս։

2. Համեմատութեամն, վերաբերութեամն, նկատմամբ, համար, զէսի Օրինակ՝ Եթէ առ Երկուառս այսպէս, որչափ ևս առաւել առ հաւ գեռն, Արտէս առ մի մարդ, այսպէս և առ բոլոր աշխարհու Զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մացսորդս աշխարհին Եթէ առ անբան արարածս այսպէս հոգ ատնի Առատուած, որչափ ևս առաւել առ բանասոր աշխարհն Զայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Աստուած առ մարդիկ, Ա. լ զինչ է այն առ այդշափ մարդիկ։ Փոքր է մարմայ մեծութիւն առ հոգեոր փարթամութիւն Աէգ, պճնող առ հանդերձս, Գթած, ուզորմած առ աղքատու կին։

160. Առ հայցականի եւ եղակի արականի հետ նշանակում է։

1. Մօտ, մօտին, կշտին. թարգմանում է երբեմն և արական հոլովով, Օրինակ՝ Աւասիկ տապար առ արմին ծառոց գնի, Քորք սորա առ մեզ են. Դամին դյաւանակն կապեալ առ դարս ձարակեսց գայլ ընդ գառին և ինձ առ ուղու մակաղեսցի Կային առ խաչին, Դաք էիք մեր պարածանք առ թշնամին նշմարատ թեան, արդ դուք էք մեր նախատինք առ նայն թշնամիս Զհեռաւորս ևս առ միմեանո համարէին Կէսըն առ նմանկ էին ի կարաւանին:

2. Համար, պատճառով, երբեմն նպատակով: Աշխարհաբար առաւմ է նաև բացառական հոլովով, Անորոշ գերբայը հայցական է դրւում, բայց հետի ստացական իմ, քո, մեր, ձեր, իւր ածականները՝ տրական Օրինակ՝ Ո* ի ձենջ առ հոգալ իւրօւմ յաւելու կարիցէ ի հասակ իւր կանգուն միւ Առ ահին (—ահից, ահու) ազազակեցին Առ նախանձու մատնեցին զնաւ Այր, առէ, առ քաջցի իւրօւմ շրջեսցի և կերիցէ զիէս անձին իւրոյ. Եւ առ յոյժ ինդութեան ոչ երբէք յագէին երկայնութեամբ ճանապարհին: Առ յոյժ աղքատութեանն ակամայ գիմեսցեն յօրէնս մոգաց: Առ սէրն Քրիստոսի խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանս: Առ հեռ և առ նախանձ ծնկեալ նենդաւ գնայր ընդ Դաւթի:

Առ հոդու առ ցաւս իւր ճչալ: Զայս տրասիկը առ իմայ յիշատակին:

3. Գարձուածներ՝ Աւել, գնել, համարել, զրել զոմի առ իմաստունու, առ յիմարս, առ մարդիկ (այլ հ համարել ի մարդիկ), առ ուռուս, առ լաւս ելն, —մէկին իմաստունի, յիմարի, մարդու տեղ դնել, մէկին մի բան համարել Յալ երկուս գառինս առ օր (—օրէնք, օրը): Առ այր (—մարդը, իւրաքանչիւր մարդ, մարդագլուխ) հարիւր գրամ տուգաննեցին: Եւ ոչ առ սակաւ մի համեմբ: Առ անգամ մի ինեղութենէ անտի զանձինս առըրեցուցեն: Աչ սակաւ գանձու առ ժամայն ծախսէին: Առ այն օր պահել հրամայեաց: Առ աշս, առ երեսյթու, առ երեսս (—երեսնեց, դրսից):

161. Առ բացառականի հետ՝ առ ի ձեռվ կամ միայն առ նշանակում է:

1. Մէկի մօտից, կողմից, բերանից, այլ և պատճառով, համար, կամ լոկ բացառականի իմաստ ունի: Օրինակ՝ Առ ի մարդկանէ այդ անկար է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւորս: Փառաւորին զիս առ ի քէն փառազին: Առ ի քէն ելին Զիառաս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէր: Զառ ի Քրիստոսէ աւանդեալ խոր-

հուրդու թպր քա առ ի հօրէ, եթէ առ ի մօրէ,
խօսեցի առ ի քէն ընդ ժողովրդեանդ, Առ յին-
քինէ խօսեր Զի մի մերժեալ ընկեցի առ ի նո-
ցանէ, Այնչ զանգիտէին առ ի յօյք բազմու-
թենէն. Առ ի մեղաց (—մեղքիցը), առ ի չփոյէ:
Առ երկիւղէ, առ հարկէ, առ պատճառէ, առ
խրեանց ընալթենէ (—յերկիւղէ, ի հարկէ ելն):

2. Նպաստակով, նամարք Անուաշ գերբային
աշխարհաբարք թարգմանւում է երկրորդական
խօսքավ որպէս զի բառով սկսուած: Օրինակ՝
Յարիցեն սուա մարդարէք և ատցեն նշանս առ
ի մոլորեցուցանկելոյ և զընտրեալսն նոցա աչք
կալեալ եին առ ի չնանաչելոյ զնաւ Անկանել
գորա զիւղդ: ի մարմին իմ՝ առ ի թաղելոյ զիս
նշանակեաց: Եթէ յիրաւանց իմոց տաղտկա-
նայցեն անձինք ձեր առ ի չտանելոյ ձեզ (§ 137.
1.) զամենայն պատուիրանս իմ: և ցրելոյ զու խան
իմ: արարից նոյնոքս և ևս ձեզ: Ծանրացւ-
ցանէ զականջու առ ի լուելոյ զգատաստան ա-
րեան, ինու զականջու զի մի տեսցէ զանիրա-
ւութիւն:— Հանցէ ի զահէն զառ ի յիշատակէն
նորա: Անդ եղին առ ի յիշատակէ զառարսն քա-
րեղէնս: Նզովեաց զիդքենին առ օրինակէ: Առ
առակէ շրջեցուցանէին:

162. Առ զործիականի նևո նշանակում է

1. Տեղի իմաստով մի բանի մօտը, մօտերը,
մօտովը, — կշտին, մօտին (համեմատութեամբ):
Օրինակ՝ Ժողովուրդն կայր առ ծովեղերն: Եր
որ անկաւ առ ճանապարհաւ: Սամարացի ուն
ճանապարհորդեալ ընդ նոյն առ նովաւ: Անդ էր
առ լերամբ երամակ մի խոզոց: Անցանէին առ
Գալիիբացւովք: Հեղցէ քահանայն զարիւնն առ
սեղաննվն յանդիման Տեսոն առ դրան խորա-
նին վկայութեան: Աչ առ այլովք վատթարովքն
վեն երկի: Զի նչ է յարդ առ ցորենաւ: Փորդ է
այս առ այնու:

2. Ժամանակի իմաստով օրերը, ժամա-
նակները, օրով: Օրինակ՝ Եւ որ այլ ևս հարկ
աշխարհին՝ բաղմագոյն քան առ հարբն նորտ
երթայր յարքանիս: Կարգեալ իսկ էին նորտ
առ նախնեօքն մերովք: Առ այնու ժամանակաւ:
Առ ջոհնդեղաւ: Առ կենդանութեամբ առն իւրաց:
Առ մեօք (=մեր օրով):

Բ Ն Դ.

163. Ընդ նայցականի նևո դործ է ածւում:

1. և նախորդի փօխանակ, յանախ երբ խըն-
դիրն ընդարձակ տարածութիւն է ցցց տալիս:

Աշխարհաբար վրայ, երեսին,—մէջ,—դէպի քառ
ուերտով, երբեմն և ուղղական, տրական ու ներ-
քոյական հոլովերով է առւում Օրինակ՝ Ել
համբաւ նորա ընդ ամենայն երկիրն ընդ այն:
Քարոզեցի աւետարանն ընդ ամենայն աշխարհ:
Բժշկին ընդ ամենայն տեղիս Ընդ ամենայն
տեղին է աէրութիւն նորա Քարոզէր Յիսուս ընդ
ամենայն Գալիլիացիս Աշխարհազիր առնել ընդ
ամենայն տիեզերու Աւետաւորու առաքեաց Ընդ
ամենայն առաւշանս աշխարհին իւրոյ (բայց՝
Աւետիս խնդալիս առաքէր յատրուշանս բա-
զում), Յորդեալ տորածանէր (Քրիստոնէու-
թիւն) ընդ ամենայն կողմանս հետաւոր ճանաւ-
պարհին: Ոչ յանկեան ուրեք աշխարհի քարոզի
(օրէնքն մեր), այլ համատարած ընդ ամենայն
երկիր, ընդ ծով և ընդ ցամաք, և ընդ կղզիս.
ոչ միայն ընդ արեմուսու, այլ և ընդ արեեւս, այլ
և ընդ հիւսիս և ընդ հարաւա Հոգ հանէր Ընդ
չորս կողմանս երկրի: Կնքեաց զդրունս եկեղե-
ցեաց ընդ ամենայն աշխարհն Պարսից—Յածիք
ընդ ծով և ընդ ցամաք: Մտեալ շրջէր Ընդ Երի-
քով: Երջէր Յիսուս ընդ ամենայն քաջաքս և
ընդ գեօգու—Հայել Ընդ երկինս, ընդ աղուաւս,
ընդ շուշանն վայրի, ընդ նոսա, ընդ նաւ Գիաց
ընդ արևմուսու: Կնել Ընդ սնարս իւր Թքին ընդ

185
երեսս նորա: Յովհաննէս ունէր . . . գոտի մաշկեա-
զէն ընդ մէջ իւր: Ասել ընդ միտս: զարմանալ
ընդ միտս (մաքում): Արկ զմատաւնս իւր ընդ
ականչն նորա:

2. Երբ գործողութիւնը մի բանի միջից,
միջով, վրայից, վրայով կամ ուղղութեամբ ան-
ցնել է ցոյց աւալիս: Աշխարհաբար հաև գոր-
ծիսկան կոմ բացառական հոլովերով: Օրինակ՝
Ընդ այլ ճանավարհ գնացին յաշխարհն իւրեանց:
Մտէք ընդ նեղ գտաւն: Բազումք են, որ մտա-
նեն ընդ նաև Անցեալ ընդ այն Յիսուսի: Գնաց
Յիսուս ընդ արտորայս նոցա: Որ ինչ մտանէ
ընդ բերան՝ ոչ ողձէ զմարդ: Եւ ընդ քո անձն
իսկ անցցէ սուրբ Զգնոյր Յիսուս ընդ եզր ծռ-
գուն, Հերձաւ վարագոյն ընդ մէջ: Եւ ընդ
Քիթսն և ընդ բերանն առ հասարակ գոլորշի
Ճերմախան ելանէր: Անցանել ընդ գետն:

3. Երբ ինդիրը ցոյց է տալիս մերձաւոր
Ժամանակիները: Աշխարհաբար Ժամանակները,
դէպի, դէմ: Վրայ, մէջ, յետոյ բառերով, կամ
ուղղական, բացառական, ներքոյական հոլովե-
րով: Օրինակ՝ Թերես գիտիցես և ընդ այն յա-
մանակս ծնեալ իցես: Ընդ այդն, ընդ առաւօտն
(—առաւօտեան գէմ): Ընդ երեկո, Ընդ տուուրսն
ընդ այնոսիկ (—այն օրերում, այն օրէրը): Ընդ

սակաւ աւուրս եկին բերին: Ինդ աւուրս տասն
եկեղեց (—տասն օքից, տասն օրում, վայ տասն
օրը կը գոյ):

4. Երբ խնդիրն անորոշ դերբայի, երբեմն և
բարական անուն է և նշանակում է մի բան լի-
նելուն պէս, լինելուց յիսոյ, երբեմն և ի նախ-
դրի իմաստավ (§ 157. 3) լինելու, լինելու ժա-
մանակ: Օրինակ՝ եւ նոյն ժամանի ընդ վերա-
նալ ի ջրոց՝ ետես ցելեալ զերկինս: Եւ եզեւ ի
մկանել ամենայն ժողովրդոցն և ընդ Յիսուսի
մլատի և կալ յազօթո՝ բանալ երկնից, ընդ
բուսանելի չորացաւ: Ծնդ երանելն նորա ի նաւէ
անտի Արջը օրհասականք ընդ վախճանել
չնոյն հզօրագոյնս կռաւին: Եթէ ոչ վաղիւ ընդ
առաւօտն, ընդ երեսում մե սրանչելոյն (արեգա-
կան) ընդ իս զիւրաբանչիւ ծաւնը նմա ոչ կըրկ-
նենիք

5. Երբէ խնդիր զգացմունք ցոյց տուող և
մի քանի ուրիշ բայերի, վրայ, զլիմն բառերի
իմաստավ, երբեմն հայցականի հետ և տրական
հոլովավ է դրւում այս խնդիրը Օրինակ՝ Դա է
որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, Զարմանա-
յին ընդ վարդապետութիւն նորա, Խոժո-
ռել, Խոռովի ընդ բանն (այլ և խոռովի ընդ բա-
նին): Խոդալ ընդ բարիս, Զարմանալ, նախան-

ձել ընդ ոք, ընդ ինչ (այլ և նախանձել զարմա-
նալ, գութ անել, ուրախանալ ընդ ումեր, ընդ
իմլը): Եր ցամամոմք մեծաւ ընդ Տիւրացիս Անցք
անցին ընդ նաւ Արարին ընդ նա զօր կամեցան:
Որ ինչ արարին ընդ նմա Զասեն ինչ ընդ դմա-
Առնել ոզորութիւն ընդ տանն նորա: Հայեցեալ
ընդ նաւ, ընդ Յիսուսի:

6. Ծնդ ... ընդ կրիկուած ձևով նշանա-
կում է երկու բանի մէջ, միջեւ, մէջոնդում;
Արանքում Օրինակ՝ վիճ մեծ է ընդ մեզ և ընդ
ձեզ Յարենէն Արէլի մինչեւ յարինն Զաքարեայ
կորուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն: Մի
լիցի կափւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիւս իմ
և ընդ հովիւս քո: Կախեցաւ ընդ երկինս և
ընդ երկիր:

Այս գործածութիւնը նշանակում է և ընդ
ամենայն, ընդ ընաւ—միանդամայն, բոլորը միա-
սին: Օրինակ՝ եւ լինէր հանդէս համարուն
վաթուուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ
հետեակ:

164. Ծնդ հայցականի և եղակի, Երբեմն և
յոզանակի տրականի հետ նշանակում է հետ,
հետը միասին: Օրինակ՝ Խռովեցաւ Հերովդէու և
ամենայն Երուսաղէմ ընդ նմա: Հաշտեաց ընդ

Եղբօր՝ քում ի՞նդ որում՝ ևս համըուրեցից, եղի խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրեից վասն սրբութեան։ Զայս խօսէր ընդ նոսաւ 2թթ ընդ իւրեանու ոչ բարձին։ Ոչ եթէ ընդ մարդոց է ալխոտ հաւատոց մերոց ... այլ ընդ Աստուծոյ։ Աւտել և ըմպել ընդ արքեցօգու։ Ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան։ Կարել ընդ մորթ, Տաւն ընդ տաւն կցել։

165. Ընդ սեռականի հնտ նշանակում է փոխանակ, փոխանակ ընդ,—տեղը, փոխանակը, երբեմն և համեսր։ Օրինակ՝ Զայն առեալ տառցես ընդ իմ՝ և ընդ քո։ Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման։ Զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ։ Առ զի՞ ի կողից նորա և ելլոց ընդ այնը մարմին։ Թագաւորեաց եղբայր նորա ընդ նորա։ Ինդ ամենայն գատարկ բանի, զոր խօսիցին մարդիկ, ատցեն համարս յաւուր գատառատանի։ Բերեր ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթուն և ընդ միոյ հարիւր։ ԶԱստուած ընդ մարդկան փոխանակեցին։

166. Ընդ բացառականի հնտ, տուանց ի նախդրի, նշանակում է՝ կողմից, կողմը, կամ լոկ բացառականի իմաստ ունի Օրինակ՝ Ասմ

զի նսացին սորա մի ընդ ակմէ քումմէ և մի յահնեկէ։ Ելին ընդ կողմանէ քրանցն։ Բառնակն էր նսցա ընդ հիւսիսոյ։ Ընդ հարաւոյ։ Ընդ արեւելից կողմանէ։ Անկցին ընդ կողմանէ քումմէ հազարք։ Ինդ ցուոցն կախեալ իջացին։ Որ ինչ կայ ընդ երեսոց լուսայն, նա է պատճառ խաւարին։

167. Ընդ զործիականի հնտ նշանակում է տակը, տակին, ներբոյ։ Օրինակ՝ Ոչ լուցանեն ճրագ և գնեն ընդ գրուանաւ եթէ ընդ յարակաւ իմակ մոցես։ Քանդի և եռ այր մի եմ ընդ իշխանութեամբ։ Մտէք ընդ վիմօք և թագերուք։ Ինդ գրով, ընդ ծառայութեամբ, ընդ աշխարհագրով արկաներ։ Ինդ հասկաւ դնել։

Բ Ս Տ.

168. Բատ հայցականի և տրականի հնտ նշանակում է՝

1. Համեմատ, պէս, նայելով, թուով, չափով։ Օրինակ՝ Մի ըստ աչս գատիք։ Բառ նոցակարծիս (կարծեաց)։ Բատ կամս, ըստ միտո, ըստ օրէնս—ըստ կամաց ևն։ Կատարել գատաստան ըստ գրեալն։ Հատուցանել իւրաքանչիւր ըստ

գործու իստ տունս, ըստ վրանս, ըստ երդ, ըստ դժուխ (—աների են, թուօվ), իստ աճել մանականն իւրաքանչիւր ըստ կարի իւրում։ Մի ըստ գործոց նոցա առնեք։

2. Դուրս, զէնը բառերի իմաստով իրեն խնդիր անցանել, ելանել, անկանել, լինել ելն, բայերի Աշխ. նաև բացառ. և ուղղ. հոգովերով։ Օրինակ՝ Անցանել ըստ չափ, ըստ սահման, ըստ օրէնս, ըստ երգումն, ըստ բանս, ըստ ջուր, Ելանել ըստ հրաման, ըստ չափ, ըստ ձեռն (ուրուք). անկանել ըստ կողմե, ըստ ակն, իստ ակն էտք ի Տեսանէ, իստ այն մի զիշերն (այն մի զիշերից զատ), և ձէնջ ըստ կողմե ելեալ, Զամենայն ազգս ժազովեամ և անցն ըստ Պահ գուռն ի ներքո, Որ և ըստ հեթանոսական օրէնս անցանէր արիւնչեզութեամբ Կայոր չելանէ ըստ քո հրաման, Որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ, Ամենայն արարածք ոչ երբեք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրեանց։

169. Ըստ բացառականի հնտ, առանց ի նախդրի, ցոյց է տալիս յաջորդութիւն, նտեւից. կամ լոկ բացառականի իմաստ ունի, Օրինակ՝ Օր ըստ օրէ, Ասել, Ելանել մի ըստ միոջէ։ Ամ-

ըստ ամէ (—օրէցօր, տարէցտարէ), Այր ըստ առնէ (իրար ետելից), Եւ որ ըստ այսմանէ, իստ նմանէ, ըստ նոցանէ, իստ հիւսիսոյ կուսէ։

170. Իրեն զ, որպէս զ, հայցականի հետ, նշանակում է՝ պէտք նման, ինչպէս. Պործ է ածում հաւասարութեան, նմանութեան բաղադատութիւն ցոյց տալու համար։ Օրինակ՝ Ետես զչոգին Աստուծոյ, զի իշանէր իրեն զաղանի Յորժամ կայցէք յազօմս, մի շասախօս լինիք իրեն զիեթանոսա, Եղերուք խորագէտք իրեն զօծու և միամիտք իրեն զաղանիսու Լերինք ցընծացեն որպէս զիսյու և ըլուրք՝ որպէս զգաւորն մաքեաց։

Իրեն թռւականի հնտ նշանակում է մօ. Ինչպէս կին արք իրեն հինգ հազարք Յիսուս մեկնեցաւ ի նոցանէ իրեն քարենէց մի։

171. Քանի զ, հայցականի հետ, նշանակում է.

1. Քան, քան թէ։ Պործ է ածում առաւելութեան կամ նուազութեան բազգատական աստիճան ցոյց տալու համար։ Ածականը յանձնին գրւում է եւս (—էլ էլ աւելի), առաւել, աւելի, եւս առաւել, առաւել եւս բառերով, կամ զոյն ըստով բաղադրուած ձևով։ Օրինակ՝ Ոգի առաւել է քան զիերակուր և մարմին քան ըդ-

Հանդերձ: Լաւ էք քան զրակում ճնճղուկաց Մեծ է հոգի քան զմարմին և ուս տրդարացեալ քան զնաւ Մեծ և քան զայս սէր ոչ ոք ունի Լաւագոյն զշինուածա մարդկեզէնս քան զհազեզէնս հաշուէին: Զմոն քան զիեանս ընտրէին: Քան զուստն ստագնինք թինիցիք, Եւս քան զես (=աւելի ու աւելի) անեցին: Աւարն օր քսն զօր (=օր օրի վրայ) անեցեալ բազմացաւ:

2. Մի բանի չափ, պէս: Ժողովրդական ձեռք թանց: Օրինակ՝ Եթէ ունիցիք հաւատու քան զհատն մանանխայ (=... հատի չափ): Խոստանայ ի վեր քան զմարդ և քան զմժիզ (=մժեղի չափ) ազդել ոչ կարէ:

Դան. 1. Գերադրական աստիճանի իմաստն ըստցուում է, ինչպէս աշխարհաբարում, նոյն բազմատական ձեռք, միայն նաև զ նախզրի ինդիքը զրւում է ամենայն, ամենենան բասերով. ինչպէս՝ Որ մնջն է քան զամնայն: Ասուել քան զամննեսեան զնսաւ դատիք Որ յետին չար է քան զամննայն չարին: Նոյն իմաստն ստացուում է, երբ բազզատութեան խնդիրը զրւում է, ինչպէս աշխարհաբարում, սեռական, բացառական և ի նախզրով հայցական (ներբայական). ինչպէս՝ Սա ամենացուց թագաւորացն մերց հարստագոյն և խոնճառոյն, և արանցն այնոցիկ և ամեննեցուն քաք: Ազբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վիհապոյն: Ամեննեցուն քան զքեզ նախա-

զունիցն ամենաշիս վեհագոյն: Ե՞նաւ կի՞նն յանկարծ երիս կատարեալ ի դիցագանց:

Դան. 2. Քան զ նախուրով զործ են ածւում և արտօնոյ նաև զ, արտօնու նաև զ=մի բանից զուըրու Յառաջ նաև զ, նախ նու զ=մի բանից առաջ: Յիսուս վկա առուրը յառաջ քան զզամիկն եկն ի Բնիթանիա (=զատկից վեց օր առաջ): Ի ներին նու զ=մի բանից ներս: Ի վեր նաև զ, ի վերոյ նու զ, զեր նաև զ=մի բանից վեր բնչպէս՝ Ի վեր քան զմարդկային ընութիւն=մարդկային ընսաթիւնից վեր: Սոյն իմաստն արտայաւում է և զեր զ ձեռք՝ Գեր զմարդիկ, զեր զրնաւն: Յնու երթայր առաջի նաև զնսաւ... նըրանցից առաջ: Զիշտնն այլ ինչ նաև զայն զործել... նըրանցից զոկ (ուրիշ) քան Այլազգ քան զայն: Անդք նաև զ=մի բանից զէնը:

172. Մինչեւ ի (յ), մինչեւ ց հայցական հոլովի հետ մինչեւ: Օրինակ՝ Ուտէին և ըմպէին ... մինչեւ յորն, յորում եմուտ նոյ ի տապան: Տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ (=մահ հու չափ): Ես ընդ ձեզ եմ զամենայն տառը մինչեւ ի կատարած աշխարհին եւ դռւ, Կափառնաստմ: մի մինչեւ յերկինս բարձրացիս, այլ մինչեւ ի գտնուս իցեւու Մինչեւ ցերը իցեւմ ընդձեղ, մինչեւ յերը անուայցեմ ձեզ: Տաց քեզ մինչեւ թագաւորութեան իմոյ: Քանիցս անդամ եթէ մեղեցէ ինձ եզրայը իմ: և թու-

զից նման մինչև յեօթն անդամն Մինչև յեօթանաննելին Հօթն անդամն ի վեց ժամէ առուրն խաւար եղի ի վերայ ամենայն երկրի մինչև յինն ժումն Մինչև ցայլմ, մինչև ցայսօր:

173. Ասց կամ բայց բացառականի հետ ըստցի զատ: Օրինակ՝ Բայց յինէն այլ առաւած քեզ մի լիցի:

174. Հանդերձ (նախագաս և յետագաս) գործիականի հետ=հնող միասին (հանդերձ): Օրինակ՝ Տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւայրըն խրով:

175. Առանց սեռականի հետ=առանց: Օրինակ՝ Առանց զձեղ ինչ աշխատ առնելոյ խաղաքը զնացաք յերկիրն Յունաց և առանց գործոյ պատերազմի սիրով մարդուսիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն:

176. Վասն (նախագաս, երբեմն և յետագաս) սեռականի հետ=համար: Օրինակ՝ Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զջեր ազաշեսցուք:

ԵԱԽԱԴՐԱԿԱՆ ԵԽ ՄԱԿՐԱՅԱԿԱՆ ԲԱԼՈՒՔ

177. Կան բազմաթիւ ածականներ, որոնք քերականութիւնների մէջ սովորաբար զրւում են իրեն նախադրութիւն: Այսպէս են՝ տրական խնդրով՝ նման, հանգոյն, հանգէտ (—նման, պէս), համեմատ, հաւասար, զոյգ կամ զոյգ ընդ (—հնամ մի տեղ, միասին), հակառակ, հակառակ ընդ. հայցական խնդրով՝ կից ի, մերձ ի, մօտ ի. հայցական և զործիական խնդրով՝ մերձ տա, մօտ տա. բացառական խնդրով՝ ուրոյն (—ջոկ, հետու, զատ, բացի), մեկուսի, հնորի Այս կարգի բառերից է իսկապէս և նախդրենների մէջ զբաժը՝ բայց (—հետու, ջոկ, զատ):

178. Աւելի կարեռ են այն անունները, որոնց հոյովական ձեռքից մի քանիսը, յաճախ նախդրեններով, գործ են ածւում նախադրութեան իժմաստով: Կամ մենակ բանում են իրեն մակրայց Ստացական ածական անունները՝ իմ, են, մեր, ձեր, իւր հարգով համաձայնում են այս անուններին: Նախդրենները՝ զ, ընդ, առ զրւում են նախագաս սեռականի վրաց:

1. Ես=ետ, ետք, ետե բառից՝ ես ընդ ես=խակոյն, ետեից, նոյն հետայն թող անդէն ետ ընդէր նմա որդին Ետ ընդ ետ իսկ ընդէր ոչ յդեաց: Են=ետ, զէօփ ետ, ետք, յետ, յետոյք Զամաթիւ ի յետ ընկեցեւալ: Ետա այսր ամենայնի այլ բանիւք զմնկ մի հարցաներ: Ետա վեց առուր Ենտու=յետ, ետ, զէպի ետ ի հայրենի օրինացն յետս կալ Գնացին յետս

յեաս (—եա ևա): Յետոյ, յեօւուս—եսեից, ետելով, ետեռով, ետենք, յետիք, յետոյ Յետոյ ձերմէ (—ձեր ետեից): Աւենին զնէր առ գրան խորանին, քանզի յետոյ նորա կայրը թագեաւ յետոյ գրաննու Յետոյ կողմն (—ետեի կողմն): Յնաւուս խորանի կամ որմոյն միրոյ, Յետուս կողմանէ: Մակել զորին յետուսս լի էին աչօք առաջոյ և յետոյ (—աստեից և ետեից): Յետոյ զզաց ցաւ: Ես զետէ—ետեէ կամ, հետպնետէ:

2. Նետ—նետ, նետո բասից՝ զնիս—ետեից, նետու երթային զնեա նորա ժողովուրդը բազումք: Աղաս զալէ զնեա մեր Այր զերզօր զնեա երթեցէ: Մի զմոյ հետ հետպնետէ, միմանց ետեից: Ի սենէ—ի վեր, ուկած, Յայուն հետէ, յայուն հետէ, յայուն հետէ, յայուն հետէ, ի սկզբանէ հետէ, ի հնոց ժամանակաց հետէ, յայունէ իսկ հետէ, յայուն ժամանակէ հետէ, ի վազուց հետէ: Երբ բեմն զործ է ածուում և նետ, ի նիտ—նետո, ետեր, ետոից:

3. Զինի, զ...կնի (երբեմն զիին) — զնետ, ետեից, ետոյց եկայք զինիքին: Գնացին զինի նորա ժողովուրդը բաշ զուրիք: Զմեր կնի ոչ շրջէր: Զերփու ամու ամ զամի զինի: Մի զմոյ կնի զեւաց: Զմիմեանց կնի կարգեալ տողեաց ցին: Զինի Արքարու մինչէ ցերուանք: Զինի ոչ բաշ զուրիք: Որ ստացին և զինի: —ասաջից և ետեից) երթային:

Դամն. Կինք նշանակում է՝ սոցք տակը, հետք Այր բատով բարդուած են՝ կրկին — երկկին (որից երկինակի), երկեկին, չորեկլին ելն: —բատից՝ երկու հետ (անդամ), երկը հետ, չորս հետ, կամ երկու ոտք, երկոք ոտք: Չորս ոտք:

4. Ակաւշ՝ բասից՝ յուսաց—զէպի առաջ, առաջ: Ընդ առաջ—ասաջիք Ելին ընդ առաջ նորա: Առաջի կամ առաջոյ—ասածիք, առջեիք, առաջից, առաջը(ը), առաջին: Առաջի նորա—նըրս առաջ(ին): Առաջի ձերց՝ զառաջնաւ, զառաջօվ—ասջեր: Զառաջնաւ իմով: Առաջը, զառաջս (ունիլ մասն ունինել, առաջը բանիլ):

5. Մէջ բասից՝ ի մէջ, ընդ մէջ—մէջ, միժավ, միշցից, ի միջի—մէջը, միջին, ի միջի ձերու: Ի միջոյ—միջցից, ի միջոյ ձերձէ:

6. Վեր բասից՝ ի վեր—վեր, զէպի վեր, վեռոյ—վերի, վերիի, վերեր, ի վերոյ—վերը, վերեր, վերեռում, վերից: Ի վերոյ նորա ի վերաւս—վերից, վերերից:

7. Ներւ, ներս բասից՝ ի ներս—ներս, ներսը, ներենյ—ներեիք, տակի: ի ներեոյ, ներեյ, ներեյս—ներեից, տակից: ներերը, տակը. ի ներեւուս—ներսից, ները—սիցից, տակից, ներեիցի:

8. Ստոր—շած բասից՝ ի ստոր, ի ստորի, զատորի. ի ստորէ, ի ստորից, ի ստորուսս—ստորն, շածում, շածից:

9. Հանդէպ բասից՝ ի հանդէպ, հանդիպիք կամ հանդիպոյ, ի հանդիպէ կամ ի հանդիպոյ, ի հանդիպոյ—հանդէպ, հանդէպիք, հանդէպից, հանդէպոյ:

10. Ակազ—միջոց, եղանակ, պատճառ բասից՝ յադազ, պազար: Համար, համար:

11. Անձ—թիւ, համար, չափ բասից՝ սակո, ի սակո—վաճն, համար: Սակո Էր, յոր սակո—ինչու համար: Յայս սակո, յայն սակո:

Սյասէս և համար բասից՝ ի համար—համար: Շի-

Նեալ և տուն հովանոց, մահարձանոց, պահանջմի գրա-
շուածովք բարձր քանդակաւ, ի համար քես իւրոց թու-
րավիշխառյաց, վերայ բառոց՝ ի վերայ—վրայ, ի վերայ
նորայ Քար ի բարի մերայ: Դէմ բառոց ընդ գել—դէմը,
ընդդէմ, հակառակ. ի դեմս, ի դիմաց—դիմացը, կող-
մից—Արտախ—դուրս, գչպի դուրս, արտախոյ—դուրսը,
զրատմ, զրափց, արտախուս—զրափց: Նոյնպէս՝ ի ձեռն,
ընդ ձեռն—ձևամիր—ձեռքով. ի պատճառս—պատճա-
ռափ ի ... կողմն. ի ... կոյս—դչպի...կողմը, ի...կողմանէ,
ի...կուսէ—կողմից: Դարձաւ ի կոնն կողմն, ի թիկունն
կոյս, յարենես կոյս: Ի տաճէ կողմանէ, մինչն կողմանէ,
ի քէն կուսէ (ահս § 137. 5): Ընթեր, առքերիւ, առ ...
ընթեր—մօմին, կատին: Պաս, գունակ, օրինակ, զօրէն—
պէս, տեսակ, նման: Փօխանակ, փօխարկն, փօխան,
չափ, յանդիման ելու:

Շ Ա. Ղ Ե Ա. Պ

179. Համարասական չափկապներ.

Եւ—եւ, ոււ:

Եւ, նաև—եւ, նաև, էլ, նոյնպէս, օրինակ՝
եկից և ես (=ես էլ) զինի քու Եւ դու ի նո-
ցանէ ես:
Եւ ... նւս, եւս—ես, էլ: Զոր ունէրն և զայն
ես (=այն էլ) կորոյս: (Արդ եւս—գեռ նձր, նմա-
հենց նոր):

Եւ ... եւ, եթէ ... եթէ, թէ ... թէ=ե'...ե',
թէ ... թէ, Համարս պահանջէ ի մէնչ և զանն
արտաքինոց, և գան ներքինոց: Եթէ մեք, և եթէ
նորա այսպէս քարազեցաք:

Եթէ, թէ—թէ (Հարցական խօսքերի մէջ,
որոնք իմաստով ժխտում են իրար). օրինակ՝
Դաւ ես՝ որ գալոցն ես, եթէ այլում ակնկալ-
ցուք: Տացմէք, եթէ ոչ տացուք: —Հարցական
խօսքերի մէջ եթէ—տրդեօք, թերես, գուցէ,
իսկ մի՛ եթէ կամ լոկ մի՛—միթէ, մի գուցէ,
մինի թէ. օրինակ՝ եթէ գիտիցես, զի պաօր
առնու Տէր զտերդ:

Եթէ ... եւ եթէ, թէ ... թէ, եւ թէպէտ, թէ-
պէտ=թէկուզ ... թէկուզ. կամ լոկ՝ թէ (միայն
երկորդ խօսքի սկզբում, այսպէս լինի թէ այն-
պէս իմաստով), օրինակ՝ Թէպէտ ի շար վարէր, և
թէպէտ ի բարի, ոչ պատճառնք ինչ էին նմա և
ոչ գովութիւնք (=թէկուզ ի շարը վարէր, թէ-
կուզ ի բարին, կամ՝ ի շարը վարէր, թէ ի բա-
րին). Թափիմք զձեղ ի գործակալացն յունաց,
թէպէտ պատերազմաւ ընդ կայսեր, թէպէտ
խազաղութեամբ (=պատերազմով լինի թէ խա-
զաղութեամբ):

Թէեւ, թէպէտ, թէպէտ եւ=թէե, թէպէտ,
թէպէտ ե, թէկուզ:

թէ թիւր=թէպէտ և շատ շատ ել ինչքան
ել օրինակ՝ Զիթէ թիւր շար իցէ (= շատ ել
շար է), առկայն աստուածապատ է:

Կամ, եւ կամ=կոմ, և կամ, կոմ թէ,
Կամ= կամ, կամ թէ... կամ թէ=կամ
... կամ:

Այլ, այլ եւ=այլ, այլ ե.
Ոչ եթէ, ոչ թէ... այլ=ոչ թէ... այլ:
Այլ=բայց, իսկ, օրինակ՝ Լուտրուք, զի ա-
սացաւ, ակն ընդ ական և ատամն ընդ ատա-
ման, և Առ ասեմ ձեզ՝ մի կու հակառակ
շարին, այլ եթէ ոք ածիցէ աստակ յաջ ծնոտ
քո, գարձն նմա և զմիւնու թէպէտ և արտաքին
մարդս մեր ասպականի, այլ ներքին մորդու մեր
նորոգի օր քայ օրէ։ Այլ եթէ=բայց եթէ։

Բայց, սակայն,—բայց սակայն, այլ ասկայն
բայց, սակայն։

Համայն, եւ համայն, համայն եւ այնպէս—
գարձեալ, բայց և այնպէս, այնու ամենայնիւ։
Իսկ=իսկ։

Իսկ=իսկ, համա, բա (հարցական խօսքի
սկզբում), օրինակ՝ Հարցանէին զնու ժաղո-
վուրդքն և ասէին, իսկ արդ (—համա այժմ)՝
զինչ գարձեացուք։ Այլ արդ=բայց արդ։

Ազա եթէ, ազա թէ=իսկ եթէ։

Նա, նամանաւանդ, նա թէ... մանաւանդ. թէ։
Արխարհաբարի հետ նոյն են՝ Ապա, ապա
ուրեմն, ուստի, —այսինքն, այս է, այսինքն է, —
քան թէ, թող թէ ելն։

180. Սորտապասական շաղկապճեր.

Զի=որ (ամեն տեսակ երկրորդական խօսքի
սկզբում): Զի=որ յարաբերական գերան.
տես § 130, 1):

Զի, որպէս, որպէս զի=որ, որպէս զի (միայն
ապանի ժամանակների հետ՝ իրեն նպաստակի
խօսք). օրինակ՝ Բարի է ինձ, զի խոնարհ արտա-
րեր զիս, որպէս (—որ, որպէս զի) ուսայց
զարդարութիւնս քա:

Զի, քանզի, վասն զի, փոխանակ զի,—որով,
որովնետեւ=որ, քանի որ, որովհետեւ (սովորա-
բար ներկայ և անցեալ ժամանակների հետ իրեն
պատճառական խօսք)։

Իյր զի, իյրու զի, որպէս զի=որ, ոյնպէս
որ, այնքան որ, օրինակ՝ Տէրն ինքնին օգնեաց
մեղ, որպէս զի (—այնպէս որ) զանուն քաջու-
թեան ժամանգեցաք։

Մանաւանդ զի, այն զի—մանաւանդ. որ
Քան, քան՝ զի—քանց, քանց որ (առաջա-
գայու քազգատական խօսքի սկզբում). օրինակ՝

Քան զնոսա արկանէր ի գեհեն՝ զնա որ պատրեացն զնոսա՝ ընդէր ոչ արկանէր=Քայց նրանց էր գեհեն ձգում..., կամ՝ նրանց զեհեն ձըւ գելու տեղի

Եթէ, թէ—եթէ, թէ, թէ որ (այս մանական խօսքի սկզբում)։

Եթէ, թէ—թէ, որ օրինակ՝ Հաւատայք եթէ կարող եմ առնել = Հաւատաւմ էք թէ կարող եմ անել. Լուա եթէ Արքեղայոս թագաւորեաց = Լուեց թէ Արքեղայոսը թագաւորեց. Ոչ եմք անձանց տեղը, եթէ ըստ կամք զնասցուք = Մինք մեր դիմի տերը չենք. թէ մեր կամքով շարժուենք։

Մինչ, մինչեւ, մինչդեռ — մինչ, մինչդեռ, քանի, քանի դեռ, երբ, երբ գեռ. օրինակ՝ Յովսէփ եօթնուատանամեայ էր, մինչ (=երբ) արածէր եզրարքն հանդերձ խաշինս Մինչև (=մինչդեռ) մեր զայլս կամէաք հնաղանդել, մեր որ վարդապետք օրինացդ էին, զինի նոցա մորութեանն խստորեցան։

Մինչեւ, յորմէ հետէ=այն օրից երբ. օրինակ՝ Մինչի գնաց Մեսրոպ յարկունական գրանէն, ոչ զոր ի ճարտարաց գատանէր անդ ի գրաց։

Մինչ, մինչեւ=մինչև, մինչև որ. օրինակ՝ Ոչ անցցէ աղջո այս, մինչև այս ամենայն եղիցի։

Մինչ, մինչեւ, մինչ զի—այնպէս որ, այնքան որ, մինչև որ Օրինակ՝ Նարքումն մեծ եղել ի ծովուն, մինչ նաւին ծածկել յալեաց անտի (.....այնպէս որ նաւը ծածկուեցաւ ...): Ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մըտանել նմա ի նաւեւ—Գրաբարում այս իմաստով մինչ, մինչեւ գրում են անորոշ գերբայի հետ, իսկ աչխարհաբար գիմաւոր բայով է առուում։

Մինչեւ—քանի գեռ չ..., գեռ չ. օրինակ՝ Մինչ չեւ հաւու խօսեալ իցէ, երիցո ուրասցիս զիս = Հաւը գեռ խօսած չի լինիլ, (որ) երեք անդամ կուրանաս ինձ Գիտէ հայրն ձեր, մինչեւ ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ։ Աշխարհաբար այս երկորդական խօսքը սովորաբար անցեալ գերբայով կամ առաջ բառով է առում։ Արարորը գեռ չկանչած, դու...։ Արարոր կանչելուց առաջ ...։

Չեւ, չեւ եւս=գեռ չ... Օրինակ՝ Չեւ էր ուսրուք ձեռնարկեալ յեկեղեցին յայտնի ։ Գեռ ոչ ոք եկեղեցուն չեր գիտել։ Ի ճշմարտով եանվերայ չեւ հասեալ։

Իրըն, յորժամ=երբ, երբ որ

Յորժամ=մինչ. (այն ժամանակ) որ, օրինակ՝ Փախիր յեգիպասս և անդ լինիլիր, ցործամց ասացից քեզ։

181. Իբրին ստորագասական շաղկառ բաւնում են, ինչպէս աշխարհաբարում՝ և հարցական բառերը, երբ առանց հարցման իբրին յարաբերական բառ են գործածւում: Դրանց ետեւից կարող է իբրին թարմատար շաղկառ դրուել եւ էլ, էլ որ, երբեմն նաև թէ—որ, Օրինակ՝ Երր և է՝ յայտնելոց են (—Երր էլ լինի...): Զինչ և խնդրեացեա՝ տաց քեզ—Խնչ էլ որ ինդրեա՝ կը տամբ քեզ:

ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

182. Գրաբարում՝ ձայնարկութիւնները յաճախ առնում են արական խնդիր: Խնչպէս աշխարհաբարում՝ երանին նրան, վայ քեզ, այսպէս և գրաբարում առնում են՝ տանդ (աղետափցո), բարէ (թշուառութեանս), ո՞հ (անմառաթեանս), ո՞վ (պանչելեացն), վաչ (ինձ):

Եատ գործածական ձայնարկութիւններից են նաև՝ աղէ, օն, հապա, օշ թէ, իցիւ, իցիւ թէ (—Երանին թէ) ելն:



ՑԱՆԿ

	Ենթական
Ցառաջարան	3
Գրաբար և աշխարհաբար	5
ԲԱՅՑ	9
ԱՆՈՐՈՇ գերրայ	9
Ապոտնի գերրայ	15
ԱՆԳԵԼ գերրայ	16
ԵՐԱԲԱԿԱՋԱԿԱՆ գերրայ	19
ԽՈՆԱՐՀՈՒՄ	21
ԼՃՈՐԾ ձեմեր	23
ԲՆԻ ձեմեր	24
ԳԻՒՆԵԼԻՔ	26
ԼՃՈՐԾԻ ԺԱՄԱՆԱԿԻՆԵՐ	29
ԲՆԻ ԺԱՄԱՆԱԿԻՆԵՐ	30
ԲՆԴՐԱՆՈՒՐ պատկեր խոնարհան	32
ԿՐԱԿՐԱԿԱՆԻ կազմութիւն	33
ԱՆԿԱՆՈՒ բայեր	37
ՊԱԿՈՒԱՆՈՒՐ բայեր	50
ԲԱՂԱՋՐԻԱԿ ԺԱՄԱՆԱԿԻՆԵՐ	55
ԺԱՄԱՆԱԿԻՆԵՐԻ գործածութիւնը	59
ԵՊԱՆԱԿԻՆ բայեր	69

ԳՐՅԱԿԱՆ	(ահուն և գերանուն)	76
ԱՆՈՒԱՆԱԿԱՆ	ՀՅՈՒՅՈՒԽԻՄ	76
Կանանաւոր	Հոլովումներ	84
Ի հորովում		84
Ու հորովում		86
Ոյ հորովում		87
Այ հորովում		94
Ան հորովում		99
Աք հորովում		107
Եր, եղ հորովում		109
Անկանոն հորովումներ		116
Փոխանցում հորովումների մէջ		120
Չհորովուող բառեր		
ԴԵՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ	ՀՅՈՒՅՈՒԽԻՄ	121
Հարցական և անորոշ անուններ		122
Անձնական գերանուններ		132
Յուցական գերանուններ		135
Փոխադարձ գերանուններ		142
Փոխադարձ գերանուններ		143
Յարաքերական գերանուն		146
Հորթների դործածութիւնը		
ԱԾՎԿԱՆ		154
Յօդեր		157
ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ		164
Զ		166
Ի, ի		170
Ճ		178
Առ		178
Բաղ		183

Բառ		189
Երբե զ, քան զ		191
Մինչն ի, մինչն ց		193
Բաց, հանգերձ, առանց, վասն		194
Նախադրական և մակրայտկան բառեր		195
ՇԱՂԿԱՊ		198
Համագասական շաղկապներ		198
Սարագասական շաղկապներ		201
ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ		204

